



330  
293P  
181  
451

**DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA**  
**ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՍԻ**

**BISHOP KHAJAG BARSAMIAN, PRIMATE**

**ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 728**

**Վիճակիս Հոգևոր Հովիներուն,**

Վերջին Հոգևորականաց Համագումարի ընթացքին անգամ մը եւս խորհրակցութեան ճիշդ եղաւ մեր եկեղեցւոյ Ս. Պատարագի տեւողութիւնը եւ հաւատացեալներու մասնակցութեան հարցը: Պաշտօն յանձնուեցաւ Տէրին Նի Շրբղիի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ Հոգևոր Հովի Արժ. Տ. Արշէն Ա. Քհնյ. Այվազեանի՝ որպէս զի օգտագործելով Հայ Եկեղեցւոյ մէջ գործածուած հին Պատարագներու օրինակները (համաձայն Գաթրքեանի եւ Տաշեանի Հայ Եկեղեցւոյ Պատարագի մասին կատարած մանրամասն ուսումնասիրութիւններուն), պատրաստէ Պատարագի համաձայն թնագիր մը:

Գլխաւորաբար նկատի ունենալով որ Կիրակի օրերը տեղի կ'ունենան Կիրակնօրեայ Վարժարաններու հանդիպումները, աշակերտները չեն կրնար իրենց մասնակցութիւնը բերել ամբողջ Պատարագին եւ միայն վերջաւորութեան կրնան եկեղեցի մուտք գործել: Կարգ մը հաւատացեալներ անձնապէս մեզի եւ ուրիշներ հրապարակաւ եւս զանգատ յայտնած են Պատարագի երկար տեւողութեան եւ ժողովուրդի մասնակցութեան կապակցութեամբ:

Տէր Արշէն պատրաստած է Պատարագի ուղեգիծ մը, որուն համաձայն ամէն Կիրակի, նախ քան Պատարագը, Վժ. 45 վայրկեան տեւողութեամբ դաստիարակչական պահ մը պիտի գործադրուի թէ Կիրակնօրեայ Վարժարանի ուսանողներուն եւ թէ հաւատացեալներուն համար: Ապա պիտի մատուցուի Ս. Պատարագը՝ համաձայն համաձայն թնագիրին, որուն կորիզ կը կազմէ մեր այսօրուան Պատարագը:

Տէր Արշէնի պատրաստած Պատարագի ուղեգիծը ներկայացուցինք Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթողիկոսի ուշադրութեան՝ տեղեկացնելով որ եթէ Նորին Սրբութիւնը համաձայն ըլլայ, մէկ տարուան փորձի շրջանի մը համար, միայն Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ մէջ ի գործ պիտի դրուի այդ ուղեգիծը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր համաձայնութիւնը յայտնած է մեր ներկայացուցած ծրագրին կապակցութեամբ: Մէկ տարուան փորձի շրջանը եթէ ցոյց տայ որ այս Պատարագը հաւատացեալներուն կողմէ ընդունելութիւն կը գտնէ, դարձեալ պիտի դիմուի Նորին Սրբութեան՝ իր վաւերացումը ստանալու համար որ այս համաձայն Պատարագը օգտագործուի մեր թեմի եկեղեցիներուն մէջ՝ եթէ Հոգևոր Հովիներն ու հաւատացեալները փափաք յայտնեն:

Կը ներկայենք Տէր Արշէնի պատրաստած համաձայն Պատարագէն օրինակ մը՝ որպէս զի ուսումնասիրէք եւ ձեր դիտողութիւններն ու թելադրութիւնները կատարէք: Յաջորդ Հոգևորականաց Համագումարին աւելի մանրամասնութեամբ եւ հանգամանօրէն պիտի քննուի այս ծրագիրը եւ ըստ այնմ դիմում կատարուի Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթողիկոսին:

Սիրոյ ողջունի  
*Խաժակ Եպս. Պարսամեան*  
Խաժակ Եպս. Պարսամեան  
Առաջնորդ